


ЗКЮП

9 - 83

Կ Զ Ո Ր Ի Ն

ՅԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿՈՆՏՆԵՍԱԿԱՆ ԶԱՐԺՄԱՆ ՄԵԶ



ԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1982

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր թեման բաժանվում է յերկու մասի. առաջին մասը—կուլտուրական շինարարության խնդիրները ևՍՀՄ-ում և կուլտուրական հնգամյակի վերանայումը, յերկրորդ մասը—կուլտուրական շինարարության դիսալոբ ճակատամասերը և կուլտուրական աշխատանքի ուղիները:

Այս դասում տրվում է կուլտուրական աշխատանքի ներկա դրության ընդհանուր գնահատականը, պատմվում է կուլտուրական հին և նոր հնգամյակի (սլանի) մասին, վորն իրագործվում է այժմ, արված են սկզբունքային դիրքավորումներ, վորոնք վերաբերում են յերեխաների մասնակցությանը կուլտուրական շինարարության ասպարիցում, հիշված են այն կարեւորագույն բնագավառները, վորանը պիտիներենք և բոլոր յերեխաները պետք է գործ դնեն իրենց ուժերը, և նշված են պիտիներ կազմակերպության կուլտուրական աշխատանքի դիսալոբ ուղիները: Վերջում տրված են ստուգիչ հարցեր և անհրաժեշտ գրականության ցանկ:

1. ՄԵՐ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

Յերբ խոսում ենք կուլտուրական շինարարության և նրա ասպարիցում յերեխաների մասնակցության մասին, մեզ համար պետք է պարզ լինի, վոր այդ կուլտուրական շինարարությունը չի կարող անջատվել մեր Միության սոցիալիստական ամբողջ շինարարությունից: Կուլտուրական շինարարությունը սոցիալիստական շինարարության կարեւորագույն ճակատամասերից մեկն է: Սակայն, առաջ, յերբ տնտեսության սոցիալիստական տրմատական վերակառուցման նախագրյալները գեո. նոր էյին ստեղծվում, կուլտուրական աշխատանքի հարցերը գրվում էյին ընդհանուր ձևով միայն: Բայց մեր տնտեսության սոցիալիստական վերակառուցումը կուլտուրական աշխատանքի հարցերը գրեց առաջին սլանի վրա: Մեզ մոտ յերեխաները մասնակցում են սոցիալիստական ամբողջ շինարարությանը: Վերջին տարիների փորձը ցույց տվեց, վոր տնտեսական շինարարության ասպարիցում պիտիներենք և բոլոր յերեխաները հարյարերեցին հսկայական ինիցիատիվա: Մենք ունենք այդ աշխատանքից վոչ միայն դաստիարակչական արդյունքներ, այլև գործնական նշանակալի ոգուտ: Յեթն վերցնենք որինսկ միայն այնպիսի մի ցուցանիշ, ինչպես ուտիլ հումք հավաքելու աշխատանքը, վոր մեծ չափով կատարված և յերեխաների ուժերով, գզալի չափով ավելացրեց մեր երապրտը և նպատակեց արդյունավանի կատարմանը: Այսպիսով յերեխաների այդ բաժինը տնտեսական հնգամյակի կատարման մեջ տյնքան նշանակալից է, վոր չի կարելի հաշվի չառնել: Սակայն կուլտուրական աշխատանքի հարցերի վրա պիտիներական կազմակերպությունները մինչև այժմ բավարար ուղադրություն չեն դարձրել: Վորքան այդ տարրինակ թվա, բայց և այնպես մեր կուլտուրական շինարարության

Գեոգրաֆի ասպարան
Հրատարակ. № 2154
Գլավլիտ 7433(ք)
Պատվեր 1093
Տիրամ 5000

3425

մի շարք անհնազանդության հանգրվաններ, ինչպես որինակ ընդհանուր պարտադիր ուսուցումը, բավարար չափով մորթիլիզացիայի չեն յենթարկել քե՛ս պլոններնների և թե բոլոր յերեխաների ուժերը: Չպետք է մոռանալ, վոր կուլտուրական ֆրոնտում, այնպես, ինչպես տնտեսական ֆրոնտում, յերեխաները կարող են դաստիարակվել վորպես կոմունիստներ: Ամենքին հայտնի յեն Լենինի խոսքերն այն մասին, թե «միայն բանվորները և գյուղացիները հետ միասին աշխատելով կարելի յե խակական կոմունիստ դառնալ», վոր «ուսման և կրթության յուրաքանչյուր քայլը պետք է կապել այն անդուլ պայքարի հետ, վոր աշխատավորները մղում են շահագործող հին հասարակության դեմ»: Այս սկզբունքային դրուլթից մենք չենք հրաժարվում մեր աշխատանքի վոչ մի բնագավառում:

Կոմիսներնի ծրագրում այս հարցի մասին ասված է հետևյալը. «Կոմունիստական գիտակցութեան մասսայական պատմաստման և հենց սոցիալիզմի գործի համար անհրաժեշտ է մարդկանց մասսայական վերափոխում, վոր հնարավոր է միայն դործնական շարժման, հեղափոխութեան մեջ. հետևաբար հեղափոխութեան անհրաժեշտ է վոչ միայն նրա համար, վոր չի կարելի վոչ մի այլ յեղանակով տապալել իշխող դասակարգը, այլև նրա համար, վոր տապալող դասակարգը կարող է միայն հեղափոխութեան մեջ մաքրվել հին հասարակութեան բոլոր կեղտերից և դառնալ ընդունակ ստեղծելու նոր հասարակութեան»: Այս ձևակերպումը շատ հստակ կերպով դնում է դաստիարակութեան մեր սկզբունքի հարցը, նա մեկնաբանում է այն, ինչ Մարքսը և Լենինը ասել են դաստիարակութեան մասին, և պարզորոշ կերպով դնում է կուլտուրական հեղափոխութեան հարցը, այսինքն, մասսաների վերափոխման հարցը, վորն անհնար է առանց հեղափոխական պայքարի, առանց մասսաների ակտիվ մասնակցութեանը այդ ասպարիզում: Այս սկզբունքային դրուլթը պետք է դառնա մեր կուլտուրական աշխատանքի հիմքը, մեր մասնակցութեան հիմքը կուլտուրական շինարարութեան մեջ:

II. ԿՈՒԼՏՈՒՐԱԲՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՅԵՎ ԽՍՀՄ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀՆԳԱՄՅԱԿԸ

Առաջին ծանրակշիռ խոսքը, վոր կուլակցութեան արտասանեց կուլտուրական շինարարութեան, կուլտուրական հեղափոխութեան հարցի մասին, 15-րդ կուսհամագումարի վորոշումն էր. «Հնգամյա պլանը սոցիալիստական շինարարութեան խնդիրների կապակցութեամբ պետք է հաշվի առնի քաղաքի և գյուղի ազգաբնակչության կուլտուրական մակարդակի վճռական բարձրացման անհրաժեշտութեանը, ԽՍՀՄ ժողովուրդների ազգային կուլտուրաների դարգացումը և կապել կուլտուրական շինարարութեան պլանը յերկրի խնդուստրացման հետ, վորպես ԽՍՀՄ սոցիալիստական շինարարութեան ընդհանուր պլանի անխզելի մասը: Կուլտուրական շինարարութեան պլանի հիմքը պետք է կազմեն ժողովրդական կրթութեան այն խնդիրները, վորոնք ապահովում են աշխատավոր լայն մասսաների կուլտուրական աճումը (ընդհանուր ուսուցում, անդերադիտութեան վերացում, մասսայական պրոֆեսիոնալիզացիան կրթութեան և այլն), և վարակյալ մասնագետներ և գիտական աշխատողներ պատրաստելու խնդիրները»: Ահա 15-րդ կուսհամագումարի հիմնական գերեկալի կուլտուրական շինարարութեան խնդիր-

ները վերաբերումը: 15-րդ կուսհամագումարը յեղափոխեց և ունեցել ընդ Լենինի հայտնի ձևակերպումը կուլտուրական աշխատանքի մասին: Լենինը գեո 11-րդ կուսհամագումարից առաջ հայտնել է հետևյալ միտքը. «Գլխավորը, վոր մեզ պակասում է, այդ կուլտուրականութեանն է, կառավարել իմանալը: Տնտեսապես և քաղաքականապես Նեպո ապահովում է մեզ համար սոցիալիստական տնտեսութեան հիմքի կառուցման հնարավորութեանը, խնդիրը միայն պրոլետարիատի կուլտուրական ուժերն են և նրա ավանգարդը»: Այդ «միայն»-ը այնքան խոշոր գործ է, վոր թե՛ կուլակցութեանը և թե՛ Լենինը իր ժամանակին բանվոր դասակարգի հատուկ ուշադրութեանը հրավիրել են կուլտուրայի իրական նվաճման անհրաժեշտութեան վրա:

Այս հիմնական գերեկալները խոշոր պարտականութեան են դնում նաև պիոներ կազմակերպութեանների վրա, նրանք պետք է մաքսիմալ չափով մորթիլիզացիայի յենթարկեն յերեխաներին՝ կատարելու կուլտուրական հնգամյակը չորս տարում, ապահովել կուլտուրական այն միջոցառումների իրագործումը, վորոնք հնարավորութեան են տալիս մոտ ժամանակում կազմակերպել յերեխաների կոմունիստական դաստիարակութեանն ավելի լայն մասշտաբով և վորոնք ապահովում են մեր առաջընթացը մանկական ամբողջ մասսան մեր սոցիալիզմի ընդգրկելու և նրա հիմնական պահանջները բավարարելու տեսակետից:

III. ԿՈՒԼՏՈՒՐԱԲՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ, ՎՈՐՏԵՂ ԱՇԽԱՏՆԻՈՒ ՅԵՆ ՅԵՐԵՆԱՆԵՐԸ

Սոցիալիստական շինարարութեան մասնակցելու վերաբերյալ հիմնական փաստաթուղթը, վոր տվել է պիոներական կազմակերպութեանը, մինչև այժմ հանդիսանում է պիոներական համալսելի (смет) նախագը: Այս նախագում կուլտուրական աշխատանքի հարցերի վերաբերյալ նշված են կուլտուրական աշխատանքի զանազան բնագավառները, վորոնց վրա պետք է կենտրոնացնել յերեխաների ուշադրութեանը: Իայց պետք է ասել, վոր ինչպես նախագը, այնպես էլ մանավանդ նրա կուլտուրական մասը կազմված է յին առանց բավարար փորձնական ստուգման և խորը մշակման: Դրա համար այնտեղ մի շարք մանր հարցեր տրված են վորպես մեծ հարցեր, իսկ ընդհանրապես, մի շարք խոշոր հարցեր դրված են վորպես մանր հարցեր: Բնորոշ է, վոր այժմ յերեխաները, կատարելով նախագը, զգում են այդ:

Վորոնք են նախագի առաջադրանքները կուլտուրական բնագավառում:

«Մովալուն ֆրոնտով պայքարենք հարեցողութեան և կրոնի դեմ», «Ռադիոընդունիչների և բարձրախոսների համար» (75 հազար ուղիորդությունից գյուղում), «Կոիվ ծանձերի, փայտօլիխների և բալոնների դեմ», այսինքն կուլտուրական աշխատանք կենցաղի առողջացման ասպարիզում: Վերջապես անհրաժեշտ է «պայքարել դպրոցի և առաջին հերթին ֆաբրիկա-գործարանային դպրոցի համար»: Այստեղ դրված է հարտուալ խնդիրը և «արհեստանոցներ սարքավորելու, դպրոցում աշխատանքը առաջ քաշելու, գյուղական դպրոցի ազդեցումիդացիայի» խրենգիրը և այլն: Ահա մոտավորապես այն գլխավոր խնդիրները, վոր դրված են նախագը կուլտուրական աշխատանքի վերաբերյալ: Միանգամայն պարզ է, վոր այժմ այդ բոլորը չի կարող բավարարել մեզ:

Յերեխաներն իրենց ուշադրութեամբ կենտրոնացնում են առաջին հերթին այն բաների վրա, վորոնք կազմում են նաև չափահասների ուշադրութեան կենտրոնը (գրավիտուսի, դպրոցի և այլ հարցերը), վորովհետև այդ իրոք աղահոգում և լուրջ առաջընթաց կուտուրական շինարարութեան բոլոր բնագավառներում, ինչպես և կեղտի, մրտնների, ճանճերի և բոլորների դեմ պայքարելու հարցում: Այժմ, այն աշխատանքի փորձի հիման վրա, վոր կատարել են պիոներները կուտուրական շինարարութեան առարկայում, և պետական կազմած պլանի հիման վրա, կարելի չե նշել կուտուրական ֆրոնտում մղվելիք պայքարի հիմնական ճակատամասերը:

Առաջին ճակատամասը, վորի վրա առաջիմ դժբախտաբար պիոներական կազմակերպութեանները քիչ ուշադրութեամբ և նդարձել, սակայն վորը հանդիսանում և հիմնական խնդիրներից մեկը հին կենցաղի վերակառուցման առարկայում, — դա նախադպրոցական դաստիարակութեան հարցն է: Կուտուրական առաջին հնդամյա պլանում նշված և հետևյալ հիմնական առաջադրանքն այդ առարկայում. «Արդյունաբերական ուսումնարանում և խորհրդատեսութեաններում նախադպրոցական հիմնարկների բոլոր տեսակները հնդամյակի վերջում 100 տոկոսով պետք և ընդգրկեն բանվորների և ծառայողների յերեխաներին: Այն արտադրութեաններում, վորտեղ զարգացած և կանանց աշխատանքը, բանվորահիմնի յերեխաների առնվազն 50 տոկոսը պետք և սպասարկվի հիմնարկների կողմից աշխատանքի ամբողջ ընթացքում, յերեխան գիշերօթիկ խմբում, վորտեղ յերեխաները կարողանան մնալ գիշերը: Կուտուրական յերեխաներում նախադպրոցական տարիքի յերեխաների ընդգրկումը հնդամյակի վերջում պետք և հասցնել 50 %-ի: Կոմունիստներում պետք և ապահովել բոլոր նախադպրոցականների ընդգրկումը»: Ահա կուտուրական հնդամյակի հիմնական առաջադրանքները նախադպրոցական դաստիարակութեան առարկայում: Ի՞նչ կարող և անել այստեղ յուրաքանչյուր կորեկտիվ, հաշվի առնել չքավոր յերեխաներին առանկումունայում, բանվորական հանրակացարանում, քաղաքում, գյուղում: Ծավալել ագիտացիոն մեծ աշխատանք ընտանիքներում, և կուտուրական կենցաղային հանձնաժողովների միջոցով հատկացնել սենյակներ և հրապարակներ փոքրերի համար, ստրճավորել, նշանակել մեծ յերեխաներին հերթապահութեան և սիստեմատիկ աշխատանք տանելու համար — ահա այն կարևորագույն ձեռնարկումները, վորոնց կարող են լծվել պիոներները զբեթե բոլոր գործարանային ուսումնարանում և գյուղում:

Պետք և ծավալել ամեն տեսակի պրիմիտիվներ, այսինքն պարզ մանկապարտեզներ և այլ ձեռնարկումներ: Դրա պատճառն այն և, վոր մենք իվիճակի չենք իսկույն ծավալել իդեալական մանկհիմնարկների լայն ցանց: Մինչդեռ պրիմիտիվները հնարավորութեամբ են տալիս տարրական կերպով սպասարկելու մեծ թվով յերեխաներին: Քաղաքներում, խոշոր խորհրդատեսութեաններում և կուտուրական յերեխաներում պետք և ստեղծել մանկական սենյակներ և հրապարակներ նախադպրոցական տարիքի յերեխաների համար, այսպես կոչված ոջախներ, գյուղում — հրապարակներ: Մենք այդ կարող ենք անել: Բացի այդ, մենք պետք և հետզհետե զարգացնել որինակելի կերպով կազմակերպված մանկապարտեզների պետական ցանց:

Հիմնարկների մասնաշաղկան տիպ կազմակերպելու համար անհրաժեշտ միջոցները պետք և ուղղվեն հասարակական կազմակերպութեաններին, պրիմիտիվներին, կուտուրական կազմակերպության, ինչպես և վորոշ բաժինը պետական միջոցներին: Մեր խնդիրն և կազմակերպել մասնաշաղկան կազմակերպության նոր տներ, հանրակացարաններ և այլն կառուցելու նախադպրոցական շինարարութեամբ կատարելու ոգով:

Յերեխորդ ընտալմաբ, վոր պահա խոշոր, վերաբերում և ավելի մեծ տարիքներին, այն և՛ ընդհանուր պարտադիր ուսուցումը և մասնաշաղկան դպրոցի վերակառուցումը: Այստեղ դրված են հետևյալ հարցերը: Պարտուն ապահովելու համար անհրաժեշտ և յերկու նախադրյալ — ուսուցիչ և չենք: Ի՞նչ պետք և անել յեղած չենք մաքսիմալ չափով ողտագործելու համար: Դրա համար պետք և դպրոցն ազատել դասարան չփոխելու ցավից: Սա ամենահիմնական միջոցն և պարտունի գործն ապահովելու համար: Լուսժողկոմատի տվյալներով մեղ մոտ միջին հաշվով աշակերտների 15 տոկոսը յերկրորդ տարին մնում և նույն խմբակում: Դա պետութեան վրա նստում և 42 միլիոն սուբյեկտ: Այդ դրամը կարելի յեր հատկացնել նոր դպրոցների շինարարութեամբ և նոր կադրերի պատրաստմանը: Մենք պիոներական համալսում (СНОТ) վորոշեցինք կրճատել յերկրորդ տարին նույն խմբակում մնացողների թիվը: Այժմ պետք և ստուգել, թե ինչ և արված այդ առարկայում: Վերահսկողութեամբ կա՞ արդյոք ողակներում, թե ինչպես են սովորում յերեխաները, այդ հարցերը դրվում են խմբակներում, աշխատում, ֆորպոստում, պատի թերթում և այլն: Կորեկտիվում կարելի չե գործնական մեծ աշխատանք ծավալել այդ հարցի շուրջը: Այդ հարցի յերկրորդ կողմն և չքավոր-միջակ դյուղացիների յերեխաների դպրոցից «մաղվելը»: Դյուղում 8-11 տարեկան յերեխաների համարյա կեսը մաղվում են դպրոցից, այսինքն միայն յերկու տարի յեն սովորում չորսի փոխարեն: Մենք պետք և ամեն դնով դրա առաջն առնել, վորովհետև միայն յերկու տարի սովորելով դպրոցում յերեխան մի քանի տարի հետո դառնալով արդեն չափահաս քաղաքացի) դառնում և անդադրելու:

Ի՞նչ պետք և անեն դրա համար պիոներական կազմակերպութեանները: Պետք և իրադրծել 15-րդ կուսհամագումարի վորոշումը, վորտեղ հաստատ կերպով ասված և, վոր անհրաժեշտ և ֆոնդեր ստեղծել չքավորների յերեխաներին ոգնելու համար: Այդ ֆոնդերը մի քանի տեղերում ստեղծված են, բայց հաճախ չեն ողտագործվում: Մի քանի տեղերում այդ ֆոնդերը մնում են մինչև ուսումնական տարվա վերջը, իսկ տեղական կազմակերպութեանները նույնիսկ հոգ չեն տանում հիշեցնելու լուսարժեքն և խորհուրդներին, վորպեսզի այդ յերեխաներին ապահովեն կոչիկով, հագուստով և դրեճական պիտույքներով:

Յուրաքանչյուր դյուղական կորեկտիվ պետք և ստուգել, թե ինչ և արել տեղական խորհուրդը կուսակցութեան այդ գիշերակախ իրադրծելու համար: Յուրաքանչյուր ողակ պետք և հատկապես հաշվի առնի բոլոր բառրակ յերեխաներին, աշխատի, վոր նրանք դպրոց դնան, նրանց ապահովեն դրեճական պիտույքներով, կոչիկով և սնունդով: Այս գործի վրա պետք և դարձնել բոլոր յերեխաների ուշադրութեամբ:

Նիի մի հարց, վորը ծագում և պարտադիր կապակցութեամբ, — դա դպրոց մանկուց առաջ յերեխաների պատրաստութեանն և: Նույն խմբակում մնալը և դպրոցից չուս հեռանալու պատճառը մեծ մասամբ այն

և, վոր ցած աշխատավարձ ստացող բանվորներին և չքավոր ու միջակ դյուղացիներին յերեխաները դառնում են ալելի աննպաստ պայմաններում, քան ապահովված ծնողների յերեխաները: Դպրոց մտնող ութ տարեկան յերեխաները դառնում են տարբեր մակարդակի վրա: Այսահոված ընտանիքների յերեխաները լավ են սովորում, իսկ մյուսները հենց առաջին տարավից սկսում են յետ մնալ: Դրա համար նախքան դպրոց մտնելը յերեխաներին պատրաստելու խնդիրը խոշոր նշանակություն ունի: Այսպես կոչված դերո խմբակներին կազմակերպումն ամառվա ընթացքում յերեխաների պատրաստման համար հանդիսանում է պիոներական կազմակերպությունների մարտական խնդիրը: Մի քանի կազմակերպություններ այս դործում ցույց են տվել մեծ խնդիրաբանություն: Շատ կազմակերպություններում ստեղծված են նախապատրաստական խմբակներ, վորոնց մեջ մեծ յերեխաները—պիոներներ—պատրաստում են փոքրերին, վորովհետև չափահաս կուլտուրական ուժերը պակասում են: Մեծահասակ յերեխաները պետք է զբաղվեն այս դործով, նրանք պետք է հասարակական կարծիք ստեղծեն դրա շուրջը և հող տանեն, վորպեսզի յերեխաները վաղորդ պատրաստվեն դպրոցի համար: Այս հարցի վրա պետք է կենտրոնացնել ամբողջ պիոներական կազմակերպություն ունեցող յուր: Ամենից առջ պետք է ապահովել տարրական գրահանաչությունը, վորը նախապայման է պարտուսի համար: Սակայն դրա հետ միասին զբաղված է դպրոցի մասնաշաղկան վերակառուցման խնդիրը: Մենք պետք է դպրոցը կապենք շրջապատի կյանքի հետ: Գյուղում նրան պետք է կապել կուլեկտիվացման, գյուղատնտեսություն մեքենայացման հետ, իսկ քաղաքում—Փաբրիկա—գործարանային կյանքի, մեր արդյունաբերության աճման, բանվորական նոր կազմերի աճման հետ: Պետք է ուսման ծրագրերը և պլանները վերակազմել համապատասխան կերպով, դպրոցական պարագմունքները դուրս բերել դպրոցի չորս պատերից դեպի դաշտ, դեպի մեքենայական կայանները և այլն: Յուրաքանչյուր ֆորպոստ դպրոցում պետք է դառնա այդ նոր ծրագրերի, աշխատանքային կենդանի մեթոդների կիրառական կազմակերպիչը դպրոցում: Կուլեկտիվ խորհուրդն այժմ դպրոցական աշխատանքի հարցերով ավելի շատ պետք է զբաղվի, քան առաջ: Մի խոսքով, «պետք է դպրոցը, այն ժամանակամիջոցում, յերբ յերեխաները սովորում են նախնի, նրանց դարձնի չահագործողներին մոշնացնելու համար մղվող պայքարի մասնակիցներ» (Լենին): Այդ կարելի չե անել միայն այն ժամանակ, յերբ դպրոցն ամբողջովին կմտնի շրջապատի հասարակական և աշխատանքային կյանքի մեջ: Դա մասնաշաղկան դպրոցի վերակառուցման հիմնական պայմանն է:

Բայց կա ելի մի յերբորդ խնդիր, վորը վերաբերում է արդեն մեծահասակ յերեխաներին— ֆաբրիկա—գործարանային դպրոցները, կուլյերիս դպրոցները և դաստիարակության մասնաշաղկան քոլիտեխնիկացիան: Բարձր տիպի ֆաբ—գործ. յոթնամյակները բանվորական ռաշոններում դեռևս լրիվ չեն մոտեցել մեր տնտեսության համար կադրեր պատրաստելու խնդիրներին: Ահհրաժեշտ է, վոր կուլեկտիվները և դրոցները վճռական կերպով դնեն յերեխաների արտագրական աշխատանքի հարցը: Դրա համար պետք է պայքարել դպրոցներում արհեստանոցներ արգավորելու համար, վոչ թե տնայնագործական, այլ գործարանային տիպի արհեստանոցներ, վորպեսզի յերեխաներին թույլ տրվի

դնալ գործարան, աշխտեղ թացվեն վարժական ցեխեր, վորպեսզի կարելի լինի սովորել վոչ թե ճնայելով, այլ մասնակցելով արտագրությանը, ամբողջովին կապվելով ձեռնարկության հասարակական—քաղաքական կյանքին: Կուլյերիտասարդության դպրոցներում պետք է ամրացնել րատրակային—չքավորական կուրիդը, պետք է այնպես անել, վոր այդ դպրոցները պատրաստելով մասնաշաղկան պրոֆեսիաներ մեր կուլտուեսությունների համար, տան այնպիսի մարդիկ, վորոնք ընդունակ են մեր շինարարությանը մոտենալ դասակարգային տեսակետից, սոցիալիստական շինարարության տեսակետից:

Պետք է ոգտագործել յուրաքանչյուր ելքարոկայան, յուրաքանչյուր ձեռնարկություն, յուրաքանչյուր նոր կառուցվող կոմբինատ մանկական մասսաների պոլիտեխնիկական դաստիարակության գործի համար: Յերեխաները շատ քիչ են ծանոթ արդյունաբերական նոր շինարարության, նրա սոցիալիստական տեմպերին և ձևերին, արտագրության կազմակերպման նոր ձևերին, աշխատանքային ենտուղիակի կոնկրետ արտահայտություններին:

Չորրորդ խնդիրը—անգրագիտության մասնաշաղկան վերացումն է, գրեքի և քերքերի տարածումը, այսինքն մասնաշաղկան կուլտուրական աշխատանք յերեխաների և չափահասների շրջանում: Անչափահասների մասին մենք խոսում ենք նրա համար, վոր դուրս գալով դպրոցից, նրանք կանգնում են նորից անդրադետ դառնալու և հասարակական կյանքից կտրվելու վտանգի առաջ: Անգրագիտության վերացման ասպարիզում յերեխաները կարող են կատարել բազմատեսակ աշխատանքներ, սկսած անդրագետների ցուցակագրումից, անգրագետներին դպրոցներին կոմպլեկտավորումից մինչև անգրագետներին սովորեցնելու աշխատանքը տանը, իրենց մոտ և անդրագիտություն վերացման դպրոցներում: Կենտ. Սեհնող Մարդում մի դպրոց վերացրել և 4 հազար հոգու անգրագիտություն: Յեթե բոլոր պիոներական կուլեկտիվները մոքիլիպցիայի յենթարկելին իրենց ուժերը այդ խնդիրը կատարելու համար, ապա կարելի կլինի անգրագիտություն վերացնել շատ ավելի կարճ ժամանակամիջոցում, քան նշված է պլանում: Սակայն բավական չե վերացնել անգրագիտությունը, պետք է նաև ամրապնդել գրագիտությունը գրքի, գրականության տարածման միջոցով: Ամեն մի կուլեկտիվ կարող է անել այդ թե՛ քաղաքում և թե՛ գյուղում: Պիոներներն այդ աշխատանքը պետք է տանեն սերտ կապ պահպանելով գրագրարանների հետ:

Վերջապես պետք է ասել նաև յերեխաների առողջության համար պայքարելու խնդրի մասին: Այստեղ պետք է ուշադրությունը դարձնել մասնաշաղկան առողջացման միջոցառումներին վրա, վորովհետև ստացիոնար սանատորիական ճամբարները, հիվանդանոցները, դիսպանսերները և այլն չեն կարող ընդգրկել նրանց կարիքն զգացող բոլոր յերեխաներին: Պետք է հասարակական կարծիք ստեղծել մանկական բուժական հիմնարկների շինարարության խնդիրների շուրջը: Բայց միաժամանակ մենք կարող ենք և պարտավոր ենք կազմակերպել մասնաշաղկան առողջացման աշխատանքը, ինչպես ճիշտ ուժեղ, յերեխաների աշխատանքի և հանգստի ճիշտ կազմակերպումը, մասնաշաղկան սանիտարական առողջապահական աշխատանքը, կոիվ միակների, ճանճերի և միջատների դեմ, վորի մասին խոսում են հավաքի (СМЕТ) նախագում: Բացի այդ, պետք է պրոպագանդ մղել սանիտարական միջոցառումի համար, վորը

մշակված և Առնոկոմաթի կողմից և վերի վրա ինչպես աղբոսի մեծությամբ
վրա, կենտրոնացած և չափահասների ուշադրությունը: Պետք է յերե-
խաները մասնակցեն այդ սանիտարական միջնակցության կիրառմանը, նրա
պրոպագանդին և մասսայական ձեռնարկումների կազմակերպմանը՝ այդ
միջնակցության յերեխաների և չափահասների շրջանում տարածելու համար:
Կարելի չէ կազմակերպել սանիտարական դասեր, յերեխաներ, մաքրու-
թյան շաբաթականներ և այլն—ահա պիտիներ կոլեկտիվների մասսայա-
կան աշխատանքի մի քանի ձևեր այդ բնագավառում:

Վեցերորդ խնդիրը—պայքարը կրոնի, ազգամիջյան ստեղծարար
և հարբեցողության դեմ: Այս տեսակետից կա արդեն հարուստ փորձ:
Այստեղ աշխատանքի մասսայական ձևերն արդեն հանրաժանությամբ են դար-
ձել:

Առանձնապես կարևոր է յուրաքանչյուր պիտիների աշխատանքն ըն-
տանիքում, վերջինի կարող ուժեղացնել առանց ողակի, իսկ յերեխան-
ամբողջ կոլեկտիվի մշտական ուղեւթյան:

Ահա այն վեց խնդիրները, վերջինի վրա պետք է կենտրոնացնել պիտի-
ներական կազմակերպության և բոլոր յերեխաների ուշադրությունը:
Մյուս պետք է ավելացնել նաև մի խնդիր, վերջինի կարող է ուժեղացնել հիմ-
նական խնդիրներին կատարմանը, այդ է—պրոպագանդի և ագիտացիա-
յի մասսայական գեղարվեստական ձևերը, կուլտուրական զվարճու-
թյունները և այլն: Այս խնդիրն ինքնանպատակ չէ, դրա համար չի կա-
րելի զենք առանձին կերպով: Մասսայական պրոպագանդի և ագիտա-
ցիայի այդ ձևերը պետք է յեղծարարել կուլտուրական և քաղաքական
ընդհանուր աշխատանքի խնդիրներին:

Հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ռադիոյի տա-
րածման վրա, կատարելով համալսարանական աշխատանք:

IV. ԿՈՒՂՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ի՞նչ մեթոդներով պետք է տանել այդ աշխատանքը: Կուլտուրա-
կան աշխատանքի այն մեթոդները, վերջինի վերջին ժամանակներս կի-
րառվում են չափահասների կողմից, ինչպես որինակ կուլտուրականները,
պետք է կիրառվեն նաև մեր պիտիներական կազմակերպություններում:
Մեղադրությունների վերաբերյալ, առաջին տատիճանի դպրոցական յերե-
խաների ցուցակադրությունների, մանկական հրապարակների կազմակերպ-
ման և այլնի համար կազմված հարվածային խմբերն աշխատանքի այն-
պիսի ձևեր և մեթոդներ են, վերջինի պետք է ծավալել և ուժեղացնել: Մոց-
մրցումը պետք է մասսայական կիրառում գտնի նաև մեր կուլտուրական
աշխատանքում: Պետք է պայքարել կուլտուրական աշխատանքի այն մե-
թոդներին դեմ, վերջինի հանդիսանում են «պուտ» կրթական նպատակներ
և կապված չեն սոցիալական շինարարության տնտեսական և քաղա-
քական խնդիրներին հետ:

Մենք պետք է պայքարենք գաստիարակչական բոլոր միջոցների մի-
ասնականության, նրանց կոմունիստական բովանդակության համար:
Մյուս պետք է ձգտեն բոլոր կուլտուրական հիմնարկները, վերջինի
առեղծվում են այժմ և կառուցվել յերկրորդ հնդամյակի ընթացքում:
Մենք այդ պահանջը պետք է զենք, յերե աշխատում ենք դպրոցում,

մանկապարտեզում, անդրադարձյալ վերաբերման ասպարեղում և կուլ-
տուրական աշխատանքի բոլոր բնագավառներում:

Մենք պետք է կուլտուրական աշխատանքի բոլոր բնագավառները
տանենք կուլտուրական միասնական պլանով և ձգտենք, վերջինի պիտի-
ներական կազմակերպությունները մոբիլիզացիայի յենթարկեն մանկա-
կան մասսաներին և ողենք չափահասների իրադրություն կուլտուրական
աշխատանքի, կուլտուրական շինարարության այդ միասնական պլանը
համապատասխան մեր կուլտուրական խնդիրներին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0187386

Սրբազանքներ՝ Հ. ՍԱՌԿՅԱՆ, Ա. ՃՈՒՂՈՒՐՅԱՆ

Հանձնված և արտադրություն 29 մարտի 1932 թ. Ստ. Ֆ. .Ա
Ստորագրված և ապագրելու 15 ապրիլի 1932 թ.

5553

104

50

10768